

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԿՈՒՆԱՆՈՒՆԵՐԻ ԽՈՍՔԻՄԱՍԱՅԻՆ ՏԱՐԱՐԺԵՓՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Լ. Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Գունանուններն զգայական-տեսողական ընկալումների նշաններ են, որոնք ցույց են տալիս տեսանելիության չափը, գույները և գույների արտահայտման աստիճանը՝ երբեմն գրանց կիրառման սահմանափակումներով (լրացուցիչ իմաստներով)¹։ Այդ կարգի բառերը մտնում են իմաստային (թեմատիկ) խմբերի մեջ, բնութագրվում են ընդհանուր նշանային ենթադաշտերով՝ միաժամանակ միմյանց հակադրվելով իմաստատարբերակիչ մի շարք հատկանիշներով։

Լեզվի բառային կազմի գունային համակարգի մեջ տարբերակում են «միջուկ» և «եզրային անդամներ» հասկացությունները²։ Գունանունների միջուկը կազմում են իմաստային տեսակետից անկախ արմատական ածականները. դրանց գունային նշանակությունն առաջնային է և չի բնորոշվում այլ գունանիշ ածականների միջոցով։ Միջուկ գունանուններն ունեն դարձվածակազմիչ արժեք և գործառական լայն ոլորտ³։

Գունային ենթադաշտի եզրային անդամներն ստորադասվում են միջուկին. դրանք միմյանց նկատմամբ կազմում են հոմանշային շարքեր, որոնց իմաստները սահմանափակվում են գերադաս անդամի՝ միջուկի միջոցով⁴։

Ինչպես ցույց է տալիս գունանուն միջուկների և նրանց եզրային անդամների իմաստային կառուցվածքի քննությունը, այդ կարգի բառերը կարող են օժտված լինել բառաքերականական բազմիմաստությամբ։ Եթե դրանց անկախացած բառական իմաստները բաշխվում են խոսքիմասային համակարգի տարբեր օղակների շրջանակներում, ուրեմն այդ գույզերը (կամ բառաշարքերը) դիտվում են իբրև խոսքիմասային տարարժեք բառեր։

Խոսքիմասային տարարժեքությունն այնպիսի քերականական կարգ է, որտեղ արտահայտության պլանում առկա են ձևով չտարբերակվող, իսկ բովանդակության պլանում իմաստով հակադրվող միավորների խմբեր։ Խոսքիմասային տարարժեք բառերը հանդես են գալիս մեկից ավելի ձևաբանական արժեքների համատեղումներով. այդպիսի բառերի խոսքիմասային նշանակությունների բաշխումը տեղի է ունենում շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստազատիչ մյուս գործոնները տվյալ դեպքում չեզոքանում են։

Ձևաիմաստային առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում այն կայուն իմաստային կապակցությունները (հետայսու՝ կպ), որոնք ունեն ընդհանուր գունանուն բաղադրիչ, որն օժտված է խոսքիմասային տարարժեքությամբ։

¹ Հմմտ. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստարանություն և բառակազմություն, Երևան, 1989, էջ 96։

² Հմմտ. Т. Г. Корсунская, Х. Х. Фридман, М. И. Черемисова, О системе цветообозначения в русском, английском и немецком языках (Уч. зап. ГПИИЯ, Горький, 1963, с. 97—103)։

³ Գունանունների դարձվածակազմիչ դերի մասին տե՛ս Լ. Ե. Кругликова, Фразеологические единицы современного русского литературного языка с «цветовыми» прилагательными (АДД, Ленинград, 1977)։

⁴ Հայերենի բառապաշարի գունային համակարգի ներսում միջուկներ են դիտվում սև, սպիտակ, կապույտ, կապույտ, կապույտ և դեղին գունանունները [տե՛ս С. А. Григорян, Семантическое поле цветообозначений армянского языка (АКД, Ереван, 1989)]։

Այդպիսի կառույցների սերման իմաստադորժառական կաղապարների բնությունը ցույց է տալիս, որ ԿԿ-ներում գունանուն բաղադրիչների խոսքիմասային տարարժեքությունը պայմանավորված է հետևյալ գործոններով:

1. Նախնական աւարարժեքությունը: Կան միջուկ գունանուններ, որոնք իբրև սինկրետիկ ձևությամբ ի սկզբանե հատկանիշի գաղափարն ու առարկայի հասկացությունն արտահայտել են միևնույն բառով իմաստային կառուցվածքի շրջանակներում⁵։ Այդ կուրդի բառերը ԿԿ-ներում հանդես են բերում փոխարևրական-վերաիմաստավորված նշանակություններ, հետևում են ևստույգաբանական բառիմաստներից՝ մնալով, սակայն, տարարժեքության կարգի շրջանակներում: Դրանք պատմական իմաստաբանության հայեցակետից հատկանշվում են որպես ծագումնաբանորեն տարարժեք բառեր և հանդես են գալիս երկարժեք գործառույթով:

2. Կայուն-փոխարևրական իմաստներով: Միջուկ գունանունները, գունային որոշակի հատկանիշ արտահայտելուց բացի, բովանդակում են նույնքան որոշակի փոխարևրական հասկացություններ՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Փոխարևրական իմաստներով դրանք հանդես են գալիս իբրև խորհրդանշներ. սև-ը տխրության, սգո, աղետի, սպիտակ-ը՝ անմեղության, արդարացիության, մաքրության, կանաչ-ը՝ ջահելության, թափության, անարգելության, կապույտ-ը՝ ցնորական անիրական տեսիլքի, կարմիր-ը՝ արյունահեղության, սպանդի, պայքարի, արգելքի, երջանկության և այլն:

Այդպիսի գունանունների համապատասխան իմաստներն էլ պայմանավորում են թե՛ նրանց ձևաբանական արժեքները և թե՛ դրանց իրացումը կառույցի ներսում:

3. Կապակցությամբ փոխկալապարմամբ (փոխակերպումով): Փոխկալապարմած (փոխակերպված) կառույցներում գունանուն բաղադրիչները բովանդակալի պլանում հանդես են գալիս վերաիմաստավորված դերով, որն աղելով նրանց ձևաբանական արժեքի վրա, առաջ է բերում իմաստարժեքային տեղաշարժեր:

Գունանունների փոխկաղապարային տարարժեքությունը կրում է համաժամանակյա բնույթ⁶:

Հնդհանրապես տարարժեք գունանունները, երկատված բառաքերական-էական իմաստներով պայմանավորված, արդի հայերենի ԿԿ-ներում հիմնականում կարող են հանդես գալ խոսքիմասային երկարժեք համատեղումներով: Դրանք ունեն ածականի և գոյականի արժեքներ. միևնույն գունանուն բաղադրիչը յեզվական տարբեր կառույցներում (հաղորդակցական թե՛ անվանողական) կարող է ի հայտ բերել կամ ածականական-հատկանշային բովանդակություն. կամ էլ գոյականական-նյութական նշանակություն՝ բնութագրելով տարարժեքության քերականական կարգով: Այդպիսի դերով կարող են հանդես գալ ինչպես գունային համակարգի միջուկները (կարմիր, կապույտ, սև, սպիտակ, կանաչ), այնպես էլ գունային ենթադաշտի եզրային անդամները (մուր, խավար, ճերմակ և այլն):

1. Միջուկ գունանունների տարարժեքությունը

Ա. Ածականի արժեքով գունանուններ: Միջուկ գունանունները ԿԿ-ներում ածականի իմաստով ու արժեքով հանդես են գալիս թե՛ ուղիղ, թե՛ փոխա-

⁵ Հմմտ. կարմիր < հնդկ. *reudh-, *rudh եկարմիր (ած.), կարմիր մետաղ. պղինձ (գոյ.) (Գ. Ջահուկյան, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, էջ 16), կապույտ < պղ. hapō-, սանս. hapota եգորշ, գորշակապույտ (ած.) և աղանի թուրք (գոյ.) (Հ. Առաքելյան, Հայերեն արմատական բառարան, Երևան, 1973, հ. 2, էջ 526) և այլն:

⁶ Տարարժեքության գործընթացի պատճառակցական հիմքերի մեջ երբեմն դժվար է առանձնացնել ա.ս կաս այն գործոնի որոշիչ դերը. դրանք շատ հաճախ հանդես են գալիս միասնաբար, իբրև միմյանց լրացնող իմաստափոխական շղթայի օղակներ:

բերական նշանակություններով: Այսպես, կարմիր միջուկ գունանունն ածականական ուղիղ բառիմաստներով հանդես է գալիս մի շարք կվ-ներում՝ «արյան դուլնի, կարմրավուն. բոսորագույն» նշանակություններով, ինչպես՝ կարմիր աղոթարան. կարմիր աստղ||արև, կարմիր հսկաներ (աստղդ.), (մեկի) հետևից կարմիր. խնձոր ուղարկել, (-ի) արյունը կարմիր է (-ից) և այլն: Հմմտ. Բացվեց կարմիր աղոթարան. Ժամանակ է դարձելու (ՀԲ, 1, 222): -Խսոն ձեռք: ծոցում պիտի մնա, պահի, պի՛նդ պահի. բո երեսի արյունն իմից կարմիր է. չէ՛ (ԱՔ, 366)⁷:

Որոշ կառույցներում կարմիր-ն արտահայտում է վերաիմաստավորվածփոխաբերական նշանակություններ, որոնք միմյանց նկատմամբ գտնվում են հականշային հարաբերության մեջ, ինչպես՝

1. «երջանիկ, ուրախ. լավ» — կարմիր բախտ

2. «դժբախտ. արյունալի» — կարմիր օր լուսանալ:

Սև միջուկ գունանունը «մրի՝ ածխի գույն» ստուգաբանական (ածականական) բառիմաստով հանդես է դալիս սև և վե տալ կապակցության մեջ: Հմմտ. Դժգոհ էին քաղաքագլուխ Մատթևոս բեյից և սպառնում էին նաև սև ֆվե տալ (ԱՔ, 349):

Փոխաբերական բառիմաստներով այն գործառական մեծ հաճախականություն ունի:

Այդ կարգի կառույցները լինում են երկու տեսակ.

1. Որոշչային դիրքի ածականը հանդես է գալիս գոյականի լրացման դերում՝ կախյալ գործառույթով, ինչպես՝

1. «ամոթալի, անջնջելի» — սև բիծ, երեսը սև,

2. «ամոթ, խավար» — սև հողին գերի գնալ, սև հողը մտնել||դնել,

3. «չար, դժբախտ, չարքաշ» — սև օր(եր), սև վիճակ, սև աշխատանք,

4. «չարագույժ, վատանշան» — (մեջտեղով) սև կատու անցնել,

5. «գաղտնի, մերժելի» — սև ցուցակ,

6. «անագորույն, անդառնալի» — սև մահի բաժին դառնալ, սև ճամփին ընկնել||դնալ,

7. «բացառիկ, հաղվադեպ, եղակի» — սև աղվես,

8. «բացասական» — սև գույն(եր)ով ներկայացնել||նկարագրել||պատկերել,

9. «խավարամուլ, հետադիմական» — սև ուժեր,

10. «մանր, շնչին. աննշան» — սև փող, սև գորշ շունենալ,

11. «վիրավոր, սգավոր» — սև սիրտ և այլն:

Հմմտ. Շտկվեի պիտի այն շեղումներն ամեն, Որ դեռ մնաքել են, քարտեղ, իբրև սև բիծ պատմության պղտոր հայացքի մեջ (ՊՄ, 1, 47): էն սև օրը, որ մենք տեսանք, Քո թշնամին թող շտեսնի (ՀԲ, 1, 310):

2. Որոշչային դիրքի ածականը կապակցության բաղադրիչների շարահասական դիրքի համապատասխան տեղաշարժով ստանձնում է ստորոգելիական գործառույթ և փոխկազմակերպված (փոխակերպված) կառույցներում հանդես է գալիս (վերացական) բայերի լրացման դերում, ինչպես՝

սև օր անել>օրը սև անել—«տառապալի, խավար»

սև երես մնալ>երեսը սև մնալ — «անպատիվ, պատվազուրկ»

սև երես անել>երեսը սև անել—նույն նշ. և այլն:

Հմմտ. Մամերդ հյուսել, կանգնել ես կալը, օրը սև արել, կապել ես ալը (ԱԽ, 36):—Բրավո՛, լեռ՛ն, դու մեր երեսը սև չարիք (ԱՇ, 1, 409):

Սպիտակ միջուկ գունանունը «ձյան՝ կավճի գույն ունեցող» ածականական ուղիղ իմաստներով գործածվում է սպիտակ ֆվե տալ, սպիտակ լույս,

⁷ Կարմիր-ը գունային ուղիղ բառիմաստները պահպանում է այնպիսի կառույցներում, որոնք բառակապակցական պատճենումներ են, հիմնականում ուսերենից, ինչպես՝ կարմիր խալ||մահիկ, կարմիր խալի||մահիկի||կիսալուսնի ընկերություն, կարմիր գիծ, կարմիր թևի պես անցնել և այլն:

սպիտակ լույսի սինթեզ և նման կարգի կառույցներում: Հմտ. Սպիտակ լույսի զգացողություն է ստեղծում... Արեգակի ճառագայթումը (ՀՄՀ, 11, 74):

ԿԿ-ներում սպիտակ-ը փոխաբերական իմաստներով գործածվում է հիմնականում անվանական կառույցներում, ինչպես՝

1. «պարզ, արդար» — սպիտակ երես, երեսն սպիտակ,
2. «անարյուն, առանց արյունահեղության» — սպիտակ մահ||եղեռն,
3. «չլուծված, անստույգ, անհայտ» — սպիտակ բիծ,
4. «բացառիկ, հազվադեպ, անսովոր» — սպիտակ ագռավ,
5. «ազատ, առանց հանգի» — սպիտակ ոտանավոր||տող և այլն:

Հմտ. Կարմիր մեր արյունն էր Սիամանթոն երգում իր սպիտակ տողով (ՊՄ, 1, 162):

Բ. Գոյականի արմեմով գունանուններ: Խնդրո առարկա միջուկ գունանունները որոշ կարգի կառույցներում ձևեր են բերել գոյականներին հատուկ երկրորդային իմաստներ. որոնք «կարելի է մեկնաբանել որպես ածականական և բայական իմաստների, այլև ածականական և բայական բառակապակցությունների իմաստների փոխկաղապարման հետևանք, որպես հենանունային գոյական որոշյալի կամ հենակետային ստորոգելիի և նրան հարող ցուցիչ իմաստների զուգորդում»⁸:

Սերման իմաստագործական կաղապարներում դրանք ածականներ են, որոնք գործառական ոլորտում ձևեր են բերել նաև գոյականական երկրորդային իմաստներ: Բուն գործածությամբ դրանք գոյականներ չեն, այլ կարող են մեկնաբանվել որպես գոյականացած ածականներ, որոնց կախյալ գործառույթը սահմանափակվում է փոխկաղապարված (փոխակերպված) ԿԿ-ների շրջանակներում, բայական հարադրի լրացման դերում:

Սերման սկզբնական աստիճանում ստորադասական դիրքի գունանուն ածականները լրացյալի զեղչման հետևանքով փոխկաղապարված կառույցներում հանդես են գալիս գոյականի արժեքով, ստանձնում են կրճատված բառակապակցության գործառույթը՝ իրենց իմաստային կառուցվածքով համատեղելով թե՛ հատկանիշի, թե՛ առարկայական հասկացության իմաստներ: Այդպիսի կառույցները լինում են երկու տեսակ.

1. Անվանաբայական կապակցություններ, որտեղ գունանուն բաղադրիչի գոյականական արժեքը կայունացած է իբրև փոխանվանական գործածության հետևանք: Այդպիսի գոյականներն իրենց բաղմաստային նշանակությամբ դեռևս գտնվում են գունային դաշտի տիրույթում. դրանք կապակցություն են կազմում տալ կամ անել բայական հարադրի հետ, ինչպես՝

Կարմիր — «սպեկտրի հիմնական գույներից մեկը՝ կարմիր գույնը» — կարմիրն տալ.

սև — «մրի՛ ածխի գույնը, սև գույնը» — սևին տալ||անել.

սպիտակ — «ձյան՝ կավճի գույնը, սպիտակ գույնը» — սպիտակին տալ:

Հմտ. Հեռվից կարելի էր համբել կարմիրն տվող մասրենու թփերը (ԱԲ, 228): Գարնան արևը հալեցնում էր ձյունը Այու սարի, և կողերը քարոտ սևին էին տալիս (ԱԲ, 31): Աթոռի վրա ընկած էր ձմեռվա վերարկուն՝ մաշված աստառով, որի տակ տեղ-տեղ սպիտակին էր տալիս բամբակը (ՆԴ, 263):

2. Անվանաբայական կապակցություններ և հաղորդակցական դարձվածքներ, որտեղ գունանուն բաղադրիչների գոյականական արժեքը պայմանավորված է կայուն-փոխաբերական իմաստներով. այդպիսի գոյականներն այլևս կապ չունեն գունային համակարգի ենթադաշտի հետ: Հաճախ գունանվան փոխաբերական իմաստն էլ իր հերթին պայմանավորված է կապակցության փոխկաղապարման (փոխակերպման) հանգամանքով, ինչպես՝ կարմիր գոտի կապել > կարմիրը կապել, կարմիր գույնը երեսից||այտերից թափվել||կաթել, սև շորեր հագ-

⁸ Գ. Ջ ա հ ու կ յ ա ն, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 121—122:

նել>սև(եր) հագնել, սպիտակ գույն հագնել>սպիտակ հագնել, սև ժապավեն կապել>սև(ը) կապել, սև օր տալ>սևը տալ:

Այդպես նաև՝ ազոավները սև կհագնեն, աշխարհը սև կկապի, սև կապել (մեկի) օրին, (-ի) գլխին սև բերել և այլն:

Հմմտ. Մեր հողը, մեր հայրենին, Մեր երկիրն ամայացավ.— Սև՝ հագիր, սևախրտ մարե (ՊՍ, 4, 184), Բայց թագավորն ո՞ւր է հիմի, Որ սև կապեմ նրա օրին (ՀԹ, 2, 126): Մին հագնում է սպիտակ. Մին կանաչին է տալիս (ՀԹ, 1, 417):

II. Գունային (ենթագաղտի եզրային անդամների տարածեմությունը

Գունային ենթագաղտի եզրային որոշ անդամներ, որոնք նախնական բառաբերականական հատկանիշներով բնութագրվում են մենիմաստությունում ու ձևաբանական միարժեքությամբ, կառույցի փոխկազմադրման (փոխակերպման) հետևանքով դուրս են եկել մենիմաստության շրջանակներից և միարժեք>երկարժեք տեղադրությունի մոդելով հանգել են խոսքիմասային տարածեքություն:

Իմաստարժեքային փոփոխությունների այդ ուղին են անցել որոշ ածականներ ու գոյականներ, որոնք արդի հայերենի ԿԿ-ներում հանդես են բերում թե՛ հատկանշային-ածականական և թե՛ առարկայական-գոյականական նշանակություններ, ինչպես՝ մուր, խավար, հեմակ և այլն:

Քննենք ԿԿ-ներում այդ բառերի տարածքը դրսևորումները՝ հիմք ընդունելով սերող միավորների ստուգաբանական խոսքիմասային իմաստներն ու արժեքները:

Ա. Ածական>գոյական արժեքների փոխկազմադրմամբ սև միջուկ գունանվան մուր և խավար եզրային անդամները ԿԿ-ներում հանդես են գալիս խոսքիմասային տարածեքության կարգով:

Մուր նախապես ունեցել է աղոտ, նսեմ. շուսավորված, անլույս» հատկանշային իմաստներ ու ածականի ձևաբանական արժեք. բովանդակային կողմով այն աղերսվում է թե՛ լույսի և թե՛ գույնի նշանակությունների հետ⁹:

Որոշ ԿԿ-ներում այն արտահայտում է փոխաբերական իմաստներ, որոնք մակաբերվել են ավելի շուտ նրա աշուսավորված, անլույս» նշանակությունից: Փոխաբերական այդ իմաստներով ու ածականի արժեքով էլ այն կապակցություն է կազմում ինչպես գոյականական անդամների, այնպես էլ վերացական բայերի հետ, ինչպես՝

1. «կասկածելի, ոչ բարեհամբավ»—մուր գործ, մուր գործեր բռնել,

մուր անցյալ ունենալ,

2. «կյանքից կտրված» — մուր անկյուն,

3. «անդրդիրմյան, դեբրին հատուկ»—մուր աշխարհ

4. «չբացահայտված, գաղտնի» — մուր մնալ:

Հմմտ. — Աթա՛ ապեր, մուր գործ է, էս գործին դու՛մի՛ խառնվիր (ԱԲ, 381): Վերջին կորիզը միշտ ընկնում էր աստծուն, և ապագան մնում էր մուր (ԱԲ, 365):

Մուր ածականի բառաբերականական կառուցվածքում ի հայտ են եկել նաև «մուր վիճակ, մթություն» վերացական հասկացության նշանակություն

⁹ Մուր-ը, որպես տարածքը գունանուն բաղադրիչ, ԿԿ-ների կառուցվածքային պլանում մենք քննում ենք որոշ վերապահումով. նրա արտահայտած նշանակությունների մեջ իշխում է լուսային հասկացության իմաստը, ջնայած, մուրը (գունային նշանակությամբ) հոմանշային հարաբերություն ունի գերադաս անդամի նկատմամբ. հմմտ. հետևյալ դարձվածային տարբերակները. աչքերի առաջ սև||մուր պառել, աչքերի առաջ սևանալ||մթենլ:

Գ. Զահուկանը, քննելով արմատական բառերի իմաստային բաշխումը, իբրև լույսի և գույնի հետ կապված հասկացություն, մուր-ը զետեղել է թե՛ ածականների և թե՛ գոյականների շարքում (տե՛ս Գ. Զահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 122, 133):

և գոյականի խոսքիմասային արժեքը. վերջինս, որպես ածականական իմաստի գոյականացած արտահայտություն, առաջացել է ստորոգելիական դիրքի ածականի անմիջական փոխկաղապարումից (փոխակերպումից): Այդպիսի գոյականի երկրորդային (փոխկաղապարային) իմաստը պարունակում է որևէ հենակետային գոյականական իմաստ (տվյալ դեպքում՝ վիճակ-ի) և նրան գումարվող որևէ լրացուցիչ իմաստ, որ փոխկաղապարմամբ ստացվել է ածականական (մուծ) իմաստից¹⁰: Այսպես մութ ըրառ, ձեռք բերելով ձմթութուն, խավար, երեկո, գիշեր՝ գոյականական իմաստներ, առկայացմամբ հանդես է գալիս մի շարք կի-ներում, որոնք ձևաբանական-կառուցվածքային առումով լինում են երկու տեսակ.

1. Մի դեպքում առկա է «գոյական+ըայ (պարզ անդամ)» կապակցական կաղապար, ինչպես՝ մութն ընկնել, մութն իջնել, մութը կոխել, մութը պատել, մութը նստել:

2. Մյուս դեպքում ունենք «գոյական+բայական հարադրություն (բաղադրյալ անդամ)» կապակցական կաղապար, ինչպես՝ մութը գետինն առնել, մութը վրա հասնել, մութը վրա ընկնել, մութը վրա տալ և այլն: Հմտ. Հո-վերն առան սար ու դարեր, Ամպերն ելան. մութն ընկավ (ԱԻ, 14): Գնում է, գնում, մի տեղ մութը վրա է հասնում (ՀԹ, 3, 98)¹¹:

Բ. Գոյական > ածական արժեքների փոխկաղապարմամբ ներմակ բառը կի-ներում հանգել է՝ խոսքիմասային տարածքության: Ստուգաբանորեն ներմակ նշանակել է «ճերմակ ձի, շագանակագույն կարմիր ձի»¹² և այդ իմաստով էլ գործածվել է հին հայերենում, Հմտ. Ծե ետ նկարել զտաշտ ի պատկերի զՄուշեղ ներմակաւն (Բուդ., 159)¹³:

Բառիմաստի ընդլայնման ուղիով ներմակ ձեռք է բերել ընդհանրապես «սպիտակ» նշանակություն՝ կապված փայլելու գաղափարի հետ, և առանձնացել է ածականի խոսքիմասային արժեքով:

Ճերմակ-ի գործածությունը գունանվան նշանակությամբ ընդհանրացած է գրական արևմտահայերենում. արևելահայերենում այն դիտվում է սպիտակ գունային ենթադասի եզրային անդամ և, իբրև կի-ների բաղադրիչ, ածականական արժեքով արտահայտում է փոխաբերական ըմբատներ, ինչպես՝

1. «արծաթե, արծաթյա. փայլուն» — ճերմակ դրամ,

2. «անարյուն» — ճերմակ սպանդ||եղեռն||ջարդ:

Հմտ. Ուստի վախեցեք սպանդից ներմակ ավելի, քան եղեռնից կարմիր (ՊՍ, 4, 321): Տիգրան Մեծն էլ նահանջում է՝ ներմակ ջարդից հաղթված (ՀՇ, 1, 3):

Ճերմակ-ը հատկանշային իմաստի միջանկյալ օղակով անցել է դարձյալ առարկայական նշանակության՝ արտահայտելով գոյականի երկրորդային (փոխկաղապարային) իմաստներ, ինչպես՝

1. «սպիտակ՝ ճերմակ գույն. սպիտակություն» — ճերմակին տալ,

2. «սպիտակ՝ ձյունաթույր մաղեր» — ճերմակ ընկնել,

3. «ուրախություն» — սևը ներս ու ճերմակը դուրս անել և այլն:

Հմտ. Չէի կարենում բռնել ես նրան. Ճերմակին տալով ծառերի հետև՝ Ծածկվում էր նա աչքես անգուման (ՀԹ, 1, 104): Դեռ աչքիս առջև է դեղին

¹⁰ Հմտ. նույն տեղում, էջ 122:

¹¹ Հոմանշային կապակցությունների սոսկական հարադրումը կարող է աստիճանավորման (գրագրության) դեր կատարել, ինչպես՝ մութն իջնել+մութն գետինն առնել > մութն իջնել՝ գետինն առնել: Հմտ. Մութը իջավ, գետինն առավ Քոչաքսրա սարերում (ՀԹ, 2, 77):

¹² Հ. Լ. Աճառյան, Նշվ. աշխ., Երևան, 1977, հ. 3, էջ 198: Որոշ գունանունների ստուգաբանորեն առարկայական իմաստներն առկա են նաև այլ լեզուներում և նույնպես վերաբերում են ձիերին (այդ մասին տե՛ս Л. А. Сараджева. Сравнительно-типологическое исследование цветоых обозначений (Պատմա-բանասիրական հանգես, 1976, № 4, էջ 190):

¹³ Իմաստի զարգացման համար հմտ. ներմակածի՝ «սպիտակ ձիավոր»։ Յիշէր հանապազ գնոյն բանս ասելով՝ թէ ներմակածին գինի արթէ (Բուդ., 159):

մորֆոլոգիայի, որով մեջ ներմակ ընկած է և որ մինչև կուրծքը կիջնե (ՄՄԵ, 169):

Անշուշտ ներմակ գունանվան վերամաստավորման գործընթացում կարևորում են իմաստափոխական այնպիսի գործոններ, ինչպես համաբանությունը (սպիտակին տալ—ճերմակին տալ), բառակապակցության փոխկադապարումը (ճերմակ մազեր ընկնել > ճերմակ ընկնել), ածականի փոխաբերական առումը (ճերմակը (ուրախությունը) դուրս անել) և այլն:

Ամփոփենք:

1. ԿԿ-ներում տարարժեք գունանունները հանդես են գալիս գոյական|| ածական խոսքիմասային արժեքների համատեղումներով:

2. Խոսքիմասային տարարժեքում կարող են հանդես գալ ինչպես միջուկ գունանունները, այնպես էլ գունային ենթադաշտի եզրային որոշ անդամներ:

3. Միջուկ գունանունների բառաքերականական բաղմիմաստությունը պայմանավորված է հետևյալ գործոններով.

ա) նախնական տարարժեքությամբ,

բ) կայուն-փոխաբերական իմաստներով,

գ) կապակցության փոխկադապարման (փոխակերպման) հանգամանքով:

4. Գունային ենթադաշտի եզրային որոշ անդամներ տարարժեքության են հանգում կամ փոխաբերական գործածությամբ, կամ կառույցի փոխակերպմամբ՝ ձեռք բերելով փոխկադապարային երկրորդական իմաստներ:

5. Ոչ փոխաբերական ԿԿ-ներում գունանուն բաղադրիչները պահպանում են իրենց գունային-նշանային իմաստները. իսկ դարձվածային կապակցություններում դրանք, փոխաբերական նշանակություններ ստանալով, դադարում են գունային-նշանային իմաստներ արտահայտելուց:

ՀԱՄԱՌՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ — Ա. Բակունց, երկեր, Երևան, 1955:

ԱԽ — Ա. Խաճակյան, երկեր, Երևան, 1955:

ԱՇ — Ա. Շիրվանզադե, երկեր, հ. 1, Երևան, 1986:

Բուգ. — Փաստաթի Բիզանդացու Պատմություն Հայոց, Թիֆլիս, 1913:

ՀԹ—Հ. Թումանյան, երկերի ժողովածու, հ. 1—3, Երևան, 1989:

ՀՇ — Հ. Շիրազ, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1992:

ՀՍՀ—Հայկական Սովետական Հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985:

ՄՄԵ — Մ. Մամուրյան, երկեր, Երևան, 1986:

ՆԴ — Նար-Դոս, Պատմվածքներ, վիպակներ, Երևան, 1978:

ՊՍ — Պ. Սևակ, երկերի ժողովածու, հ. 1—4, Երևան, 1972—1973:

МОРФОЛОГИЧЕСКАЯ ПОЛИСЕМИЯ КОРНЕВЫХ ЦВЕТООБОЗНАЧЕНИЙ В УСТОЙЧИВЫХ СЛОВСОЧЕТАНИЯХ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Л. М. ХАЧАТРЯН

Резюме

Семантический анализ цветообозначений армянского языка показывает, что в разных сочетаниях они могут совмещать несколько частеречных значений, тем самым приобретая морфологическую полисемию. Данное грамматическое явление в устойчивых словосочетаниях основывается на следующих факторах: а) на этимологическом значе-

նիստի, б) на переосмыслении слов, в) на трансформации словосочетаний.

Цветообозначения с морфологической полисемией, проявляя двухвалентность, в устойчивых словосочетаниях выступают в роли или прилагательного, или существительного. В подобной функции выступают как ядра системы цветообозначений (*կարմիր*—красный, *սև*—черный, *սպիտակ*—белый...), так и периферийные члены семантического микрополя ((*մութ*—темный, *լուրջ*—тусклый, *ճ'րակ*—белый...).

Когда цветообозначения приобретают переосмысленные значения, они выходят из данного семантического поля цвета.